

**ՎՐԱՑԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՀԻՄՔԵՐՈՎ  
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Վրացական փոխառությունները հայերեն են թափանցել կա՛մ գրական ճանապարհով, կա՛մ անմիջական շփման հետևանք են: Ինչպես նշում է Ռ. Ղազարյանը, քանի որ միջին դարերում հայերենի՝ վրացերենից կատարած փոխառությունները երբեմն ակնհայտ զուգահեռներ ունեն կովկասյան այլ լեզուներում, ուստի որոշ փոխառությունների անմիջական աղբյուր կարող են լինել իբերակովկասյան լեզվաընտանիքի մեջ մտնող առանձին լեզուներ<sup>1</sup>: Միջինհայերենյան շրջանում կատարված վրացական փոխառությունները էական դեր չեն կատարել հայերենի ընդհանուր բառապաշարի զարգացման գործում: Դրանց մի մասը, չմերվելով հայերենի բառազանձին, դուրս է մղվել գործածությունից, իսկ մյուս մասը որոշ փոփոխություններով պահպանվել է ժամանակակից հայերենում՝ *արեղի > արեթ, բլարջի > բաղարջ, գրուզի > գրուզ, թոկի > թոկ, թոշի > թոշ, խազի > խազ, խորումի > խորում, ձէսի > ձէս, ծվելի > ծիլ, կոտոշի > կոտոշ, ճալի > ճաղ, ճենճի > ճենճ, մաշիա > մաշիկ, փոցխի > փոցխ*:

Վրացական փոխառություններից շատերը չունեն կիրառության լայն շրջանակ: Ժողովրդախոսակցական լեզվի միջոցով ուղիղ ճանապարհով կատարված փոխառություններն ավելի շատ վերաբերում են առտնին կյանքին ու կենցաղին. «Դրանցից շատ քչերն են ներկայացնում որևէ կուլտուրական արժեք»<sup>2</sup> և գործածական են եղել տարբեր բարբառներում. ի վերջո հենց տարբեր բարբառների ազդեցությամբ էլ մեծ մասամբ պայմանավորված է միջին գրական լեզվի ոչ միատարր բնույթը<sup>3</sup>: Նույնիսկ Վրաստանից դուրս, բուն Հայաստանի գավառների ժողովուրդը, վրացերենից մի խումբ բառեր փոխառելով, մտցրել է իր բարբառի մեջ, և դրանց մի մասն անցել է գրական լեզվին, օրինակ՝ *բիձա, բիձ, բղավել, թոխրել, ծապլի, մաճառ* և այլն<sup>4</sup>: Այն բառամիավորները, որոնք գրական փոխառություններ են, վերաբերում են պետական կյանքին, պաշտոնավարությանը, կրոնին:

Մեր ընտրանքում կան բառեր, որոնք Հ. Աճառյանը թեև համարում

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 154:  
<sup>2</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, էջ 214:  
<sup>3</sup> Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 214:  
<sup>4</sup> Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 224-225:

է փոխառյալ վրացերենից, բայց միաժամանակ նշում է, որ դրանք կարող են մի ընդհանուր աղբյուրից անցած լինել և՛ հայերենին, և՛ վրացերենին, քանի որ հատկապես «կուլտուրական» արժեք են ներկայացնում<sup>5</sup>, օրինակ՝ *գաղատոս* բառը, որի աղբյուրը, ըստ նրա, կարող է լինել խալդերենը:

Վրացերենից փոխառյալ բառամիավորները քաղել ենք Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանից» (այսուհետ՝ ՄՀԲ), «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունից, համեմատել ենք դրանք Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի», Գ. Ջահուհյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի» տվյալների հետ: Նյութի ընտրության և բառերի բացատրության հարցում մեծապես նպաստել են հայագիտության մեծ երախտավորներ Ն. Բյուզանդացու, Հ. Աճառյանի բառագիտական-բառաքննական հետազոտությունները: Մենք փորձել ենք պարզ բառերի համար նշել դրանց խոսքիմասային պատկանելությունը և բառի բացատրությունը, գոյականների հոլովումը, թիվը, սակայն շատ դեպքերում չունենք որոշակի ձևաբանական տեղեկություններ, քանի որ շատերը մեզ են հասել մեկերկու կիրառությամբ և հաճախ ուղիղ ձևով: Վրացերենից փոխառյալ բառերը ավանդված են գրաբարով և միջին հայերենով գրված միջնադարյան երկերում, վրացերենից թարգմանված գործերում և հիշատակարաններում: Հ. Աճառյանը միջինհայերենյան շրջանում վրացերենից փոխառյալ բառերի թիվը հասցրել է 56-ի<sup>6</sup>, մինչդեռ Մ. Մուրադյանն առանձնացնում է վրացերենից փոխառյալ 39 բառ<sup>7</sup>, որոնցից Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում» բացակայում է 17-ը: Ռ. Ղազարյանը միջին հայերենում վրացերենից փոխառյալ է համարում 42 բառ<sup>8</sup>, սակայն այս ցուցակից բացակայում են ՄՀԲ-ում արձանագրված որոշ բառեր, որոնք մենք ներառել ենք մեր ընտրանքում: Կան նաև մի քանի փոխառյալ բառեր, որոնք հիմնականում հանդիպում են տարբեր ժանրերի ստեղծագործություններում և դուրս են մնացել հայտնի բառարաններից: Դրանցից մի քանիսն ընդգրկված են Ն. Պողոսյանի հրատարակած բառարանում՝ *բոկանայ* < բոգանա «եկվոր», *գանաղօրայ* < գանաքոփի «դրացի», *կիրճի/կուռճի* < գուրջի «վրացի», *նաթիաս* < նաթեսավի «ազգակից, մերձավոր», *նացվալ* < նացվալի «փոխանորդ, տեղապահ», *սայթխուցես* < սախլթուխուցեսի «պալատական գործերի կառավարիչ»:

Վրացերենից հայերենի քննարկվող շրջան թափանցած փոխառյալ

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 217:

<sup>6</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 218-225:

<sup>7</sup> Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 296:

<sup>8</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 154:

<sup>9</sup> Տե՛ս Ն. Պողոսյան, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում, Եր., 2014:

բառերը կարելի է ենթարկել հետևյալ իմաստային դասակարգման:

1. Պետական կյանք և պաշտոնավարություն արտահայտող բառեր-**ազնի/ազնաուրի** «1. ազնվական ծագում ունեցող, 2. քաղցրաբարո, քաղաքավարի»<sup>10</sup>, **դեղեպուլ** «1. վրաց ազնվական, 2. նշանավոր», **դեփալ** «թագուհի», **դպել** «իշխանական տիտղոս», **երիսթաւ/երիսթաւ** «հրամանատար», **ծիկնօսպար** «դիվանադպիր», **մամփուղ** «արքա, իշխան», **մանդատորթախուցէս** «մարզպան, կուսակալ», **մուսբերիզ** «մարտիկ», **նացխալ** «փոխանորդ, տեղապահ», **ջրիկ** «սուրհանդակ», **սալթիուցէս** «պալատական կառավարիչ», **սեփեծուլ** «թագավորագն»:

2. Ազգություն-**գոռել** «գուրիացի», **խազիւ** «աբխազացի», **ճենեուլ** «չինացի», **կիւրճի** «վրացի, վիրաբնակ հայ»:

3. Կրոն, նախապաշարմունք-**ծինամծոր** «վանահայր», **կրուլ** «անեծք», **ճոնդիտէլ** «ճոնդիդի վանքի արքեպիսկոպոսը», **մամթավար** «քահանայապետ»:

4. Բուսական աշխարհ-**բալախ** «փշախոտ», **լագուս** «եգիպտացորեն», **խորբալ** «1. ցորեն, 2. ցորնատար նավ», **խորոմ // խորոն** «հնձած խոտի խուրձ», **ծիլ** «1. ծիլ, ցողուն, 2. մաս, բաժին, 3. բարակ թել», **կիտր** «վարունգ», **կոծոխուր** «ծոր», **կուծուռի** «երիցուկ», **ճիլ** «1. տանիքը ծածկելու երկար ու բարակ խոտ, սեգ, 2. կակուղ եղեգ, կնյուն, 3. բույսերի թել-թել արմատ», **չէչ** «1. կեղևանք, 2. ծաղկախտից մնացած հետքեր դեմքին, 3. մեղրամուխ ծակ-ծակ բջիջներ», **սիսիլ** «կաղին», **սուս** «ճյուղ», **փիճի** «եղևին»:

5. Կենդանական աշխարհ-**բալդինջ** «մլուկ, փայտոջիլ», **բոչոյ** «փոքրիկ ձի», **խարի** «եգ», **ծիս** «ճնճղուկ», **կօսոջ** «եղջուր»:

6. Գործողություն-**բղաւել** «գոռալ», **բշփել** «1. հանդիմանել, սաստել, 2. վտարել, վնասել»:

7. Հատկանիշ - **բոզ** «անառակ կին», **գմիր** «ուժեղ», **գոուզ** «գանգրահեր», **լոթի-** «1. փողոցային սրիկա, 2. հարբեցող, 3. ծակաչք, ագահ», **խարբ** «անհագ», **ճլել // ճլէլք//ճլերք** «1.նիհարութիւն, 2.նիհար, թոքախտավոր», **շէթ** «խենթ»:

8. Բնություն, ֆիզիկական աշխարհ **«աբէղ/աբէթ»**<sup>11</sup> «ոյուրավատ նյութ, պատրույգ», **թոջ** «1. եղյամ, 2. սառույցի կտոր, 3. ջրի երեսով գնացող հարդ», **խազ** «1. գիծ, գիր, շարք, ձեռքի ակոսաձև գծերը, 2. ձայնագրական նշան», **խաստ** «գարդ, նախշ», **կինճ** «մանր քար», **ճաղագ** «1.անտառ, 2. գետափնյա մացառուտ», **քոփ//քոք** «քարայր»:

9. Կենցաղ, առտնին առարկաներ-**ակութ** «վառարան», **գաղատոս**

<sup>10</sup> Ինչպես նշում է Հ. Աճառյանը, «...վրացի բառը, յետ դառնալով մեզ՝ գաւառականների մէջ տուել է **ազնաուր** «1. հսկայ, վիթխարի մարդ, 2. երևակայական էակ, ոգի, ջին» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 87):

<sup>11</sup> Այս բառը Գ. Ջահուկյանը համարում է վրացական փոխառություն և նշում է, որ թեն Հ. Աճառյանը հնարավոր է համարում հակառակը (Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 74), սակայն վրացերեն բառը ընդհանուր քարթվելական է (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 19):

«1. քարուկիր, 2. որմնադիր», **թոխր** «բրիչ», **թոկ** «պարան», **ծապլի** «ձագար», **ծէս** «1. կարգ, կանոն, 2. արարողություն», **կեղ** «մահակ», **հալա** «նվեր փեսացուի կողմից», **ճաղ** «1. ցից (սայլի կողքի ճաղերը), 2. սրունքի երկու ոսկորները, 3. գործելու շուղ», **ճօճ** «1. ճոճում, շարժում, 2. ճոճանակ, մանկական օրորոց», **մանդիկ** «խուրջին, պայուսակ», **մաշիկ** «կոշիկ», **մարմաշ** «բարակ կտավ», **չիքիլա** «գլխի ծածկոց», **ջոխ** «բիր», **փոցխ** «ճանկոռիկ»:

10. Ուտելիք, ըմպելիք- **ատալայ/արտալայ**<sup>12</sup> «տավարի ազդրի փափուկ միս և դրանով կերակուր», **բաղարջ/բաղաճ/բաղաջ**- «1. անթթխմոր հաց, 2. կլոր ու տափակ», **բանդակ** «օշարակ», **ճաղ** «հաց (հատկապես՝ կորեկի)», **ճասթուր** «սիմինդրի հաց», **ճենճ** «տապակած մսի հյութ», **մաճառ** «գինի», **շռաստ** «պանրի շիճուկ»:

11. Մարդիկ, մարմնամասեր- **բիճա** «հորեղբայր», **բիճ** «1. ծառա, 2. ապօրինի գավակ, 3. տղա, երեխա», **գանաղօբայ** «դրացի», **գուլայ** «սիրտ», **դեղայ** «մայր», **խիզան** «1. պանդուխտ, 2. ընտանիք», **խտիտ** «գիրկ», **ծօլա** «ա՛յ տղա, որդի», **կացի** «մանուկ, տղա», **նաթիաս** «ազգական, մերձավոր», **քալա** «ա՛յ աղջիկ»:

12. Մասնագիտություն, գիտություն-**մեսխուր/մեսխուրան** «ջուլհակագործություն», **ճոն** «մուշտակ կարող», **ցխարեպա** «պատմություն»:

13. Հիվանդություն-**սեն/սենփորի** «փորացալ, արինալուծ»:

14. Չափի միավոր- **սոմառ/սոմար** «ընդեղենի չափ՝ 20 փուր»:

Անդրադառնալով հայերենում վրացական փոխառությունների տառադարձման առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ միջնադարյան այդ փոխառությունների մեջ հիմնականում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. վրացերեն բառերի վերջին **ի** ձայնավորի անկում՝ **թոկի** > **թոկ**, **խատի** > **խատ**, **ճիլի** > **ճիլ**, **սենի** > **սեն**, **խազի** > **խազ**, **խիզանի** > **խիզան**:

2. Վրացերեն բառերի վերջին **ա** ձայնավորի անկում՝ **բաղլինջա** > **բաղլինջ**, **ճաճա** > **չէչ**:

3. Չայնեղների վերածում խուլերի՝ **դիդերուլի** > **դեդեպուլ**, **տբելի** > **դպել**, **մծիգնոբարի** > **ծիկնօպար**<sup>13</sup>:

Վրացական փոխառությունների խոսքիմասային պատկանելությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում գոյականներ են, համեմատաբար քիչ են ածականները և բայերը: Գոյականները ենթարկվում են առավելապես **ի** հոլովման, հաճախ նաև՝ **ի-ա**, **ու**, **ո** արտաքին հոլովումների՝ **արտալայ-արտալի**, **բաղարճ-բաղարճի/բաղարճաց/բաղարճոյ**, **բիճայ-բիճի**, **բոզ-բոզի/բոզաց**, **գանաղօբայ-գանաղօբի**, **լոթի-լոթու**, **խիզան-խիզանի/խիզանաց**, **ծիլ-ծլի/ծլոյ**, **մաշիկ-մաշկի**, **չիքի-**

<sup>12</sup> Այս բառը Հ. Աճառյանը համարում է փոխառյալ վրացերենից (տե՛ս Հ. Աճառյան, Չայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 338), իսկ Ռ. Ղազարյանը՝ թուրքերենից (տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. 1, Եր., 1987, էջ 80):

<sup>13</sup> Հնարավոր է, որ այս ձևերը ոչ թե փոփոխված են, այլ ուղղակի արտացոլում են միջինհայերենյան արտասանությունը:

լայ-չիքիլի, փիճի-փիճու//փիճոյ և այլն: Գոյականների հոգնակին կազմվում է տարբեր հոգնակերտ վերջավորություններով, ինչպես՝ *արտալայ-արտալայնի, բոզ-բոզեան, դեղեպուլ-դեղեպուլք, լոթի-լոթիք//լոթիներ//լոթեստան, մումբերիզ-մումբերիզք, շքրիկ-շքրիկք* և այլն: Հ. Աճառյանը *ազնատրի* բառի համար բերում է հավաքական հոգնակիի առանձնահատուկ ձև՝ *ազնատրլուղ*//ազնվականություն, որտեղ առկա է բառը՝ մի վրացերեն և մի թուրքերեն մասնիկով<sup>14</sup>:

Վրացական փոխառությունների մեջ կան նաև բազմիմաստ բառեր՝ *խիզան* «1. պանդուխտ, 2. ընտանիք, գերդաստան, 3. ընտանիքի մանր երեխաներ», *ճաղ* «1. ցից (սայլի կողքի ճաղերը), 2. սրունքի երկու ոսկորները, 3. գործելու շյուղ», *ճօճ* «1. շարժում, ճոճում, 2. ճոճանակ, 3. մանկական օրորոց» և այլն:

Միջին հայերենում վրացական բառափոխառություններից մի քանիսն ունեն համանուններ. *բալախ* «1. վրաց. բալախի՝ փշախտ, 2. չնչին, աննշան» (անստույգ բառ), *խարք* «1. վրաց. խարքի՝ անհագ, ասոր. սուր, թուր», *կինճ* «1. վրաց. կենճի՝ մանր քար, 2. պարսկ. վարագ», *շոաստ* «1. վրաց. շրատի՝ պանրի շիճուկ, 2. կարմիր պղինձ» (անստույգ բառ), *քոք* «1. պարսկ. կաթսա, կարաս, 2. վրաց. քվաբի, քարանձավ, խոռոչ»:

Փոխառությունները, փոխատու լեզվից վերցվելով իրենց ինքնուրույն արժեքով և հնչյունական ձևավորմամբ, փոխառու լեզվում հետագայում կարող են ենթարկվել ածանցման և բառաբարդման՝ կազմելով նոր բառամիավորներ: Բառաբարդման և ածանցման հետևանքով մի դեպքում փոխառված բառամիավորը պահպանում է իր խոսքիմասային պատկանելությունը՝ *բաղարջ-բաղարջիկ, խիզան-խիզանատեր, խիզանամեր, խիզանատուն*, մյուս դեպքում տեղի է ունենում անցում մի խոսքի մասից մյուսը՝ *գաղատոս-գաղատոսաշեն, մաշիկ-մաշկակար* (գոյական>ածական), *բալախ-բալախել, բաղարջ-բաղարջնալ, թոկ-թոկել, ճենճ-ճենճել* (գոյական>բայ):

Փոխառոյալ բառով և լեզվի սեփական միջոցներով կազմությունները հայ լեզվաբանության մեջ հիմնականում համարվում են սեփական բառակերտումներ: Հ. Աճառյանը, խոսելով այդպիսի կազմությունների մասին, առանձնացնում է դրանց երկու խումբ. ա) երբ փոխառված բայարմատին ավելանում է հայերենի բայական վերջավորությունը, բ) երբ փոխառված արմատին ավելանում են *անել, լինել* բայերը՝ գործածելով փոխառոյալ արմատները որպես հարադիրներ<sup>15</sup>: Այս բոլոր բայերը Հ. Աճառյանը անվանում է փոխառոյալ բայեր, իսկ Գ. Ջահուկյանը այս բաղադրությունները համարում է հիբրիդային կազմություններ: Նա իրավացիորեն նշում է, որ դրանց հիմնականում առաջին բաղադ-

<sup>14</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 87:

<sup>15</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, IV, Բ, Եր., 1959, էջ 488-499:

րիչն է օտարազգի ծագման, և այդ բաղադրություններն անվանում է կիսափոխառություններ-կիսապատճենումներ<sup>16</sup>: Լ. Հովհաննիսյանը բայական փոխառությունների մասին խոսելիս օտար ձևայրեմի լեզվի ձևայթ կաղապարով կառույցները փոխառություններ չի համարում, և այդպիսի բառերը բառացանկում նշում է «փոխառյալ արմատը մատնացույց անելու միտումով»<sup>17</sup>: Ներկայացնելով օտար արմատներով կազմված մի շարք բայեր և ածանցավոր կազմություններ՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ դրանք փոխառություններ չեն, քանի որ եթե, օրինակ, փոխառություն համարենք *աշխատել* բայը, անտեսելով հայկական *-ել* մասնիկը, ապա «նույն իրավունքով փոխառյալ միավոր պետք է համարենք աշխատանք-ը, աշխատութիւն-ը, աշխատառնել-ը, մի խոսքով *աշխատ*-ով կազմված բոլոր ձևերը, մի բան, որ բնավ տրամաբանական չէ»<sup>18</sup>: Սակայն լեզվաբանը կարևորում է այդպիսի կազմությունների ուսումնասիրությունը, քանի որ ոչ միայն օտար ձևերի ուսումնասիրությամբ, այլև օտար միավորն ընդգրկող մայրենի ձևերի քննությամբ է ավելի լիարժեք բացահայտվում օտար ազդեցությունների դերը փոխառու լեզվում:

Սույն հոդվածում մենք անդրադարձել ենք վրացերենից փոխառյալ հիմքերով միջինհայերենյան բառակազմական կաղապարներին: Այդ կաղապարները բաժանել ենք 2 խմբի՝ բառաբարդման և ածանցման:

**Բառաբարդման կաղապարներ:** Ըստ իրենց կառուցվածքային-բառակազմական հիմնական առանձնահատկությունների՝ բաղադրյալ բառերը բաժանվում են երկու խմբի՝ համադրական և վերլուծական բաղադրություններ: Համադրական բարդությունները ներկայացրել ենք երկու խմբով՝ հոդակապով և անհոդակապ բարդություններ: Առանձնացրել ենք նաև յուրաքանչյուրի՝ մեր ընտրանքում հանդիպող ենթակաղապարները կամ տարբերակները, երբ բաղադրիչ արմատները հանդես են գալիս հնչյունափոխված կամ թեքույթավորմամբ: Ըստ այդմ՝ հոդակապով բարդությունների հիմնական կաղապարը կլինի **SjS՝** հաջորդաբար ներկայացվող ենթակաղապարներով<sup>19</sup>: Հոդակապի դերում հիմնականում հանդես է գալիս *ա*-ն, ինչպես՝ **բայխահակ, բոգայերձ, գաղատոսաշէն, խիզանատէր** և այլն, երբեմն՝ *ե/է*-ն՝ **խազէխազ, ճենճենում, մաշէկար, չէչէքար**: Հոդակապով բարդությունների մեջ նկատել ենք մեկ շաղկապավոր բաղադրություն՝ **խատումատ**: Որպես վերլուծական բաղադրություններ՝ առանձին քննել ենք հարադրավոր

<sup>16</sup> Տե՛ս **Գ. Չահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 225:

<sup>17</sup> **Լ. Հովհաննիսյան**, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 9:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>19</sup> Սրանցում *S*-ը հիմքն է, *S*-ը՝ հնչյունափոխված հիմքը, *j*-ը՝ հոդակապը, *ձ*-ը՝ հնչյունափոխված հոդակապը, *S'*-ը՝ քերականական ձևավորում ունեցող հիմքը, *c*-ն՝ շաղկապը, կրկնավորներն ընդգծվում են (տե՛ս **Լ. Հովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 56):

բայերը: Ստորև ներկայացնում ենք վրացերենից փոխառյալ հիմքերով հոդակապավոր կաղապարները:

**SjS- բալախահակ, բաղարջակեր, բոզաբարոյ, բոզաբիր, բոզակից, բոզահամ, բոզահոմանի, բոզապետ, բոզապերձ, բոզատուն, գաղատոսաշէն, խիզանատեր, խիզանամեր, խիզանատուն, հայածէս, ճենճերալի, ճենճերահոտ, յունածէս, չէչաքար:**

**SjS- գոզաբուրդ, ծտապաշար, ծտախաղող, ծտախնձոր, ծտատանձ, Ճլլամահ, մաշկակար:**

**SjS<sup>f</sup> – բաղարջակեր, բաղարջամատոյց, բոզաբոյձ, բոզալաց, բոզածին, բոզակաց, ճենճերալից :**

**ScS –խատումատ:**

Անհոդակապ կազմությունների մի մասում երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավորով: Կան նաև օրինակներ, երբ պարզապես երկու բաղաձայնների հանդիպմամբ են կազմվում անհոդակապ բարդություններ: Ստորև ներկայացնում ենք անհոդակապ կազմությունների օրինակները:

**SS-արեթաման, բաղարջընծայ, բոզաուգ, բոզորդի, բոզտուն, խազտետր, ճաղմայր, ճոնրնտիր, չէչմեղր:**

**S S- մաշկշոր:**

**SS<sup>f</sup> - բոզարած, բոզլաց:**

Այժմ ներկայացնենք մեր ընտրանքում տեղ գտած բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելության բանաձևերը:

**1.Գոյական + գոյական - արեթաման, արեթատունկ, բալախահակ, բոզաբարոյ, բոզաբիր, բոզահամ, բոզահոմանի, բոզապետ, բոզտուն, խիզանամեր, խիզանատեր, խիզանատուն, ծտախաղող, ծտախնձոր, ծտապաշար, ծտատանձ, ճենճերագոհ, ճենճերահոտ, Ճլլամահ, նիզակածոձ, յոնածոձ, չէչաքար:**

**2.Գոյական + բայարմատ (բայահիմք)- բաղարջակեր, բաղարջամատոյց, բոզաբոյձ, բոզլաց, բոզածին, բոզակաց, բոզակից, բոզատեր, բոզասպան, գաղատոսաշէն, ճենճերալից, մաշկակար:**

**3. Ածական+ գոյական- գոզաբուրդ:**

**4. Գոյական+ածական-ճենճերալի:**

**4. Մակբայ+ բայ -յարածոձ:**

**Հարադրավոր բայեր:** Որպես բայի վերլուծական ձևեր՝ առանձնաձևում են հարադրավոր և գուգադրական բայերը: Նշենք, որ գուգադրական բայերի՝ 2 բայերից կազմված վերլուծական կազմությունների մեր ընտրանքում չենք հանդիպել: Մեծ թիվ են կազմում վրացերենից փոխառյալ հարադիր ունեցող հարադրավոր բայերը, որոնք միջին հայերենում ավելի լայն տարածում ունեին՝ պայմանավորված առաջին հերթին դրանց իմաստային առանձնահատկություններով՝ խոսքին կենդանի շունչ, թարմություն տալու, խոսակցական լեզվում ավելի շատ տարածված լինելու հանգամանքով: Սրանցում հարադրի դերում հան-

դես եկող փոխառյալ բառերը օժտված են բառակազմական մեծ արժեքով և կենսունակությամբ: Ինչպես հայտնի է, թեև հարադրավոր բայերը բաղկացած են երկու բաղադրիչներից, սակայն ունեն մեկ բառային իմաստ և գործածվում են որպես մեկ բառ: Բաղադրության իմաստը կարող է պայմանավորված լինել բայով կամ հարադրով: Դրանց ձևաբանական յուրահատկությունը պայմանավորված է նաև ոչ բայական բաղադրիչի խոսքիմասային պատկանելությամբ: Հարադրավոր բայերի մի մասում հարադիրը բայական բաղադրիչի հետ կապվել է **ի** նախդրի միջոցով: Վրացերենից փոխառյալ բաղադրիչ ունեցող հարադրություններն առանձնացնելիս առնչվել ենք հարադրավոր բայերի միջին հայերենի բառարանում ոչ ամբողջությամբ արձանագրված լինելու փաստին: ՄՀԲ-ում մի դեպքում դրանք ներկայացված են ամբողջությամբ որպես գլխաբառ, մյուս դեպքում տրված են իբրև բաղադրիչներից մեկի՝ որպես գլխաբառի առանձին կիրառություն: Մակայն առավել հաճախ բերվում են հարադրավոր բայերով նախադասություններ՝ առանց նշելու դրանցում գործածված հարադրավոր բայը: Հարադրավոր բայերում վրացերենից փոխառյալ հարադիրներն արտահայտվել են գոյականով, որը բայական բաղադրիչի հետ դրսևորում է բազմազան շարահյուսական հարաբերություններ: Ըստ այդմ՝ գոյական հարադիրը դրվել է.

ա) Ուղղական-հայցական հոլովով - **արեթ դառնալ, բոզլացութիւն անել, թոկը կտրած, թոկը վիզը դնել, թոշ գալ, թոշ կապել, թոշ տալ, խազ քաշել, խիզտի-բիզտի անել** (խազմզել), **լուից ճենճ հանել, ճլերք գցել, ճլերք ընկնել, ճլելք կոտորիլ, ի ճլէլս ձգել, ձօձ//ձօշ տալ, չեչ ընկնել:**

բ) Բացառական հոլովով - **թոկից փախած:**

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, միջին հայերենում կիրառված հարադրավոր բայերի զգալի մասը կազմված է **անել, առնել, գալ, դնել, ընկնել, լինել, հասնել, տալ** բայերով: Գ. Ջահուկյանը գտնում է, որ **առնել, լինել, տալ** բայերով կազմված հարադրությունները մեծ թիվ են կազմել միջին իրանական լեզուներում, և հայերենում նրանց գործածության առատությունը թերևս իրանական ազդեցության արդյունք է<sup>20</sup>: Հետաքրքրություն են ներկայացնում նաև որոշ ասացվածքներ և նախադասություններ՝ **թոկը կտրած մոզու պես, թոկը վիզը դրած ման տալ, թոկ չեմ տա, որ խեղդվի, ճանձն ինչ է, որ ճենձն ինչ ըլի, ճանձր ճենձին կվազի** և այլն:

**Ածանցման կաղապարներ:** Ածանցման կաղապարները ներկայացնում ենք երեք ենթախմբով՝ նախածանցավոր, վերջածանցավոր և բայածանցավոր կաղապարներ:

**Նախածանցման կաղապարներ:** Նախածանցման պարզագույն կաղապարն է **աՏ**, որով ստեղծված բառերը կազմված են **ան-** ժխտական

<sup>20</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 563:



նախածանցով, օրինակ՝ **aS**- *անխագ, անհալալ*: Նախածանցման ժամանակ շեշտի փոփոխություն, հետևաբար նաև շեշտափոխական հնչյունափոխություն տեղի չի ունենում, և սրանցում պահպանվում են մաքուր հիմքերը: Մյուս նախածանցներով կազմված բաղադրություններ չեն հանդիպել:

**Վերջածանցման կաղապարներ:** Վերջածանցման կաղապարները բերվելու են ըստ համապատասխան ածանցների այբբենական դասավորության: Յուրաքանչյուր ածանցի համար նախ ներկայացնելու ենք **Sa** հիմնակաղապարով կազմված բառերը, ապա **Sa** և **Sʹa** տարբերակներով կազմվածները:

**Sa**՝ - *աբար՝ քոգաբար, -ած՝ հալալած, -ական՝ լոթիական, ճենճերական, -ան՝ ճոճան, -անակ՝ ճոճանակ, -անոց՝ բոգանոց, -անք՝ ճենճերանք, քչպանք, -արան՝ արեթարան, -ացու՝ հալալացու, -աւոր՝ փոցիաւոր, -եայ՝ բաղարջեայ, -եան՝ բոգեան, -ենի՝ արեթենի, -իկ՝ բաղիկ, ծիտիկ, հալալիկ, ճաղիկ, -իչ՝ խաղիչ, -նոց՝ սոմառնոց, -չի՝ խորոմչի, -ոտ՝ ճենճոտ, չեչոտ, -ութիւն՝ ազնաւորութիւն, բոգութիւն, խարբութիւն, ծինամոլորութիւն, -ուկ՝ արեթուկ, բաղարջուկ, ճաղուկ, -ում՝ խորում, ճոճում, -ումն՝ փոցիումն, -ուտ՝ խատուտ, -ւոր//ուոր՝ կօտօշուտ, փոցիւտ:*

**Sa** - *ական՝ ծիսական, -եղեն՝ հալվեղեն, -կուտ՝ ճլկուտ, -ութիւն՝ լոթութիւն, -ստան՝ լոթեստան, -ուկ՝ ծլուկ:*

**Sa** - *եակ՝ խատեկ:*

Երկածանց բաղադրություններից հանդիպում է հետևյալ կաղապարը (**Sa**)a - *խատուտիկ, կուռճխատանցի, ճենճոտան, ճենճոթոց, ճոճեմական, չեչոտենի:*

Բարդածանցավոր կազմությունները մեր ընտրանքում ներկայանում են հետևյալ կաղապարներով՝ **S(Sa)**-*բաղարջնախշի, հալալօրհնէք, (SSʹ)a*-*բաղարջկերութիւն, (SS)a*- *ճլարձակութիւն, (SSʹ)a*- *բոգրածութիւն, SjSʹ* - *բաղարջամատոյց, (SjSʹ)a*-*բաղարջակերութիւն, (SjS)a*-*մաշկակրութիւն:*

**Բայածանցներ:** Հայերենում, ինչպես հայտնի է, «բայական բառույթը միշտ բաղադրյալ է՝ կազմված առնվազն երկու ձևույթից՝ արմատից և վերջավորություններից»<sup>21</sup>, քանի որ բայահիմքին, լինի դա կազմությանը արմատական, ածանցավոր թե բարդ, միշտ ավելանում է *-ել//ալ* քերականական ձևույթը: Որպես բայի սկզբնաձև, բառարանային միավոր՝ արդի հայերենում ընդունված է անորոշ դերբայը, որն արդեն բաղադրյալ է՝ կազմված հիմքից և վերջավորությունից: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ սույն հոդվածում բայերը քննում ենք ածանցավոր կազմությունների մեջ: Ըստ բաղադրիչների կապակցելիության եղանակի կամ ըստ կառուցվածքային-բառակազմական առանձնահատ-

<sup>21</sup> Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 299:

կությունների՝ ինչպես մյուս խոսքի մասերի դեպքում, կունենանք վերլուծական և համադրական կազմություններ: Ինչ վերաբերում է համադրական կազմություններին, պետք է նշել, որ հայերենի զարգացման բոլոր փուլերին հատուկ է անվանական խոսքի մասերից, հատկապես գոյականից և ածականից բայական մասնիկավորմամբ բայեր կազմելու լեզվական միջոցը: Մեր ընտրանքում վրացերենից փոխառյալ անվանական հիմքերով բայեր են.

**Sa- բալախել, թոխրել, թոկել, խազել, խորումել, կօսոջել, ճաղել, ճենճել, ճոճալ, փոցխել, քշփել:**

**Sa- ծլել:**

(S j S)a-ճենճահամել:

(S a)a-ճենճոտիլ, չէչոտել:

(SS)a-խազխազել:

(SS)a-խազմզել (2-րդ բաղադրիչի հնչյունափոխությամբ):

(SS a)a-ծլծլոտիլ (2 բաղադրիչների հնչյունափոխությամբ):

Sfa և Sfa քերականական ձևավորում ունեցող սերող հիմքերով խումբ են կազմում սոսկածանցավորները և պատճառական բայերը՝ իրենց տարբերակային ձևերով: Սոսկածանցներից մեր ընտրանքում հանդիպում է **-ան-** ածանցը, որն ամենակենսունակ ածանցն է հայերենի պատմական բոլոր փուլերում և բայեր է կազմել գոյականներից և ածականներից: Միջին հայերենին բնորոշ է **-ան-** ածանցի և նրա հնչյունափոխված տարբերակի զուգահեռ կիրառությունը որոշ բայերում (-անալ<-նալ), օրինակ՝ **Sfa- բաղարճանալ//բաղարճնալ, բոզանալ//բոզնալ:** Սա ժողովրդախոսակցական լեզվի ազդեցության հետևանք է: Պատճառական **-ացն-** ածանցով հանդիպել են հետևյալ բայերը՝ (S a)<sup>f</sup> **a-ճենճերոտացնել, չէչոտացնել,** ինչպես նաև գրաբարյան **-ուցան-** ածանցով կազմված **S<sup>f</sup> a- ճօճեցուցանել, S<sup>f</sup> a- ծլեցուցանել** բայերը: Բազմապատկական ածանց ունեն հետևյալ բայերը՝ **ճենճոտալ, ճնճոտալ, ճօճկտալ:**

Բարդ և ածանցավոր բառերում շեշտափոխության հետ կապված՝ ձայնավորները ենթարկվում են հետևյալ հնչյունափոխությունների.

**է>ի-** ձես-ծիսական, **ի+ա=ե-** լոթի-լոթեստան, **ի>ը-** ծիտ-ծտախաղող, ծտապաշար, ծտատանձ, **ծիլ-ծլուկ,** **ճիլ-ճլկուտ,** **ի>ժ-** մաշիկ-մաշկակար, **ա>ժ-** բոզարած-բոզրածութիւն, **մաշկակար-մաշկակրութիւն,** **հալալ-հալլեղեն,** **ու>ժ-** գռուզ-գռզարուրդ, **ե>ժ-** ճլել-ճլլամահ:

Վերլուծական բաղադրություններից մեր ընտրանքում հանդիպել են կրկնավորներ՝ անփոփոխ կամ հնչյունափոխված բաղադրիչներով՝ **բաղարջ-չաղարջ, լոթի-փոթի, խազ-խազ, ծիլ-ծիլ:**

Այսպիսով, մեր առանձնացրած օտար բաղադրիչով և հայերենի սեփական բառակազմական միջոցներով կազմությունների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է հայերենի զարգացման որոշակի շրջանում որևէ օտար լեզվի (տվյալ դեպքում՝ վրացերենի) ազդեցությո-

յունն ավելի ճշգրիտ ներկայացնելու համար: Բաղադրություններում վրացերենից փոխառյալ բառերի առանձնացումը խիստ կարևոր է, քանի որ դրանով որոշվում են տվյալ փոխառության գործածության հաճախականությունը և լեզվական արժեքը, որը կարևոր է ընդհանրապես փոխառյալ բառերի գնահատման համար:

**Բանալի բառեր** – կաղապար, հաղորդակցում, լեզվական կառուցվածք, ածանցում, բառապաշար, բարբառ, գրական լեզու, անմիջական փոխառություն, հիբրիդային կազմություններ

**СУСАННА ГРИГОРЯН – Среднеармянские словообразовательные модели с заимствованными грузинскими основами.** – В лексике среднеармянского языка имеются грузинские заимствования, которые вошли в него письменным или устным путём. Заимствования, взятые из языка-источника с их собственными значениями и фонетическими особенностями, впоследствии могут подвергаться сложению или деривации в заимствующем языке. Такие сложные и производные слова в языке считаются гибридными образованиями. Выделение грузинских заимствованных корней в сложных словах важно, так как этим определяется частота и употребление данного заимствования, существенная для оценки заимствованных слов вообще.

**Ключевые слова:** модель, коммуникация, языковая структура, деривация, лексика, диалект, литературный язык, прямое и косвенное заимствование, гибридные образования

**SUSANNA GRIGORYAN – Middle Armenian Word Formation Patterns with Bases Borrowed from Georgian.** – There are loan words borrowed from Georgian in the vocabulary of Middle Armenian, which entered the language in both written and oral ways. The loan words are taken from the foreign language with their own meaning and phonetic peculiarities, but can later undergo affixation or compounding in the borrower language. This kind of compound and derivative words are considered to be hybrid formations in the language. The separation of loan words from Georgian within word compositions is very important because it decides the frequency and usage of the given loan word which is essential for the estimation of the value of borrowings in general.

**Key words:** pattern, communication, linguistic structure, affixation, dialect, literary language, direct and indirect borrowing, hybrid formations